



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



10633

658

7-39







51  
p. 1038



150

2002



Միջազգային թիւերէն հր. կառ.

ՄԻՄՈՆ ԶԻՍՒԼԷԳՁԵԱՆ

ԱՌԱՋՆՈՐԴ

# ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

Կ Ա Մ


ՏԱՐԵՐՔ

## ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ

Պատմութիւն վաճառականութեան եւ ուսումնասիրութիւնը վաճառականութեան ամէն ճիւղերու վրայ. — Առեւտրական Օրէնսգիտութիւն, Աշխարհագրութիւն, Տնտեսագիտութիւն. — Վաճառագիտութիւն. — Թղթակցութիւն Հայ. Տաճկ. Գաղ. եւ Անգլ. լեզուներով. — Արհեստից եւ արհեստական նոր զիւտերու վրայ ծանօթութիւններ. — Առեւտրական սակարանական եւ պանրայի հաշիւներ եւայլն.



Հասոբ Ա. — Տէտր Թ.



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԷՐԵԱՆ

1901



ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՕՐԷՆՍԳԻՏՈՒԹԻՒՆ

## Յանձնակատարներու

### Առանձնաշնորհումը

« Առաջնորդ Վաճառականաց » ի հրատարակչին մասնաւոր փափաքանաց համեմատ այս անգամ պիտի խօսինք այն բացառիկ առանձնաշնորհման վրայ զոր կը վայելեն յանձնակատարները, Առեւտրական Օրինագրքի 54 և 55 յօդուածներուն համեմատ :

Յայտնի է որ երբ յանձնակատար մը, ուրիշի ծախելու համար, վաճառական է մը ապրանք առնէ, գրէթէ միշտ կանխավճար (avance) մը կուտայ այդ ապրանքին փոխարէն և անոր համար կարգ մը ծախքեր կ'ընէ, յետոյ — այսինքն ապրանքը ծախելու ատեն — հաշուելու պայմանաւ : Իրաւարանական ընդհանուր սկզբանց համեմատ, ծախուելու համար եկած այդ ապրանքը, մինչեւ որ ծախուի, զըրկողին ինչքը կը համարուի, որով, եթէ զըրկող վաճառականը սնանկանայ, այդ ապրանքն ալ մասային գոյքը կը կազմէ : Արդ, եթէ այդ վաճառականին պարտապահանջներն ապրանքն ետ առնեն և յանձնակատարն ալ, իր պահանջին համար, միւս սովորական պարտապահանջներուն պէս մասային գրիմելով իրեն ինկած հարիւրին սաչափ բաժինն առնէ, անգարմանելի կորուստի մը կ'ենթարկուի. և եթէ այս կորուստը քանի մը անգամ կրկնուի ինք ալ կը սնանկանայ, կ'ոչնչանայ : Ահա յանձնակատարն այս տեսակ վտանգներու դէմ պաշտպանելու համար է որ օրէնքը՝ ծախելու պաշտօն



ունեցող (\*) յանձնակատարներուն մասնաւոր առանձնաշը-  
նորհում մը տուած է, այսինքն ծախելու համար զրկուած  
ապրանքը իր իրաւունքին փոխարէն տեսակ մը գրաւ (բեքից)  
կը համարուի: Հետեւաբար, երբ ապրանք զրկող վաճառա-  
կանը սնանկանայ, յանձնակատարը մասային չի դիմեր իր ի-  
րաւունքն առնելու համար, այլ այդ ապրանքը կը ծախէ և  
անոր արժէքէն վար կը դնէ իր պահանջքը: Չմոռնանք ը-  
սելու որ այդ ապրանքը ծախելու համար դատարանին ալ  
չի դիմեր, այլ իր ունեցած արտօնութեան համեմատ հրա-  
պարակի դնով կը ծախէ ինքն իր գլխուն, մինչ սովորական  
գրաւ մը ծախելու համար դատարանի մը վճիռ պէտք է:  
Եթէ ապրանքը արդէն ծախած է, դարձեալ առանց դատա-  
րանի դիմելու, անոր արժէքէն վար կը դնէ իր իրա-  
ւունքը: Այժմ քննենք թէ յանձնակատարին ո՞ր իրաւունք-  
ներն ապահովուած են այդ առանձնաշնորհումով: 1. — Ապ-  
րանքին փոխարէն զրկուած ստակը: 2. — Այս ստակին տո-  
կոսը (եթէ տոկոսին քանակը որոշուած չըլլայ, բնականա-  
բար օրինական 9 % տոկոս կը հաշուուի): 3. — Այդ ապրա-  
նաց փոխադրութեան, պահպանման և վաճառման համար  
եղած ծախքերը: Հոս կարեւոր հարցում մը կը ներկայանայ:  
Արդեօք յանձնակատարին ֆոմիսիօնն ալ (յանձնարարողչէք)  
կը վայելէ՞ այդ առանձնաշնորհում: Մեր օրէնքը միայն վե-  
րոյիչեալ երեք տեսակ իրաւունքներն առանձնաշնորհեալ  
նկատած է: Ուրեմն ֆոմիսիօնը, ինչպէս նաեւ ուրիշ ո և է  
մէկ պահանջը, դուրս կը մնայ, որովհետեւ այս տեսակ ա-  
ռանձնաշնորհումներ բացառութիւն են եւ բացառութիւն-  
ները պէտք է բացորոշ կերպով յիշուած ըլլան օրէնքին մէջ:  
Իրաւ է թէ երբ նկատի առնենք օրէնքին նպատակը, որ

[\*] Յանձնակատարները, իրենց զբաղմանց համեմատ, գլխաւո-  
րաբար երեք տեսակ են. — Ա. Ուրիշին հաշուոյն գնելու պաշտօն ու-  
նեցող յանձնակատար [commissionnaire acheteur]. — Բ. Ուրիշին  
հաշուոյն ծախող յանձնակատարներ [commissionnaire vendeur] եւ  
Գ. — Ուրիշին հաշուոյն փոխադրութիւն ընող յանձնակատարներ [com-  
missionnaire de transport]: Այս երեք տարբեր գործողութիւնները  
միեւնոյն անձը կրնայ կատարել: Առաջին երկու տեսակ յանձնակատա-  
րութեամբ զբաղողներուն commissionnaire en marchandises կ'ըսեն:

յանձնակատարները պաշտպանել է, պէտք էր որ ֆոմիսիօնն  
ալ այդ առանձնաշնորհեալ իրաւանց կարգը դատուէր: Ար-  
դէն գաղղիական Օրինագրքին այս մասը 23 Մայիս 1863ին  
բարեփոխուելով ֆոմիսիօնն ալ առանձնաշնորհեալ համար-  
ուած է: Ուրեմն, մեր ներկայ օրէնքով, յանձնակատարն իր  
ֆոմիսիօնին համար, իրրեւ սովորական պարտապահանջ, մա-  
սային կը դիմէ եւ իրեն ինկած բաժինը միայն կ'առնէ:

Յանձնակատար մը, այս առանձնաշնորհումէն կարենալ  
օգտուելու համար, պէտք է որ հետեւեալ պայմանները ը-  
րացընէ: Ա. — Զբաղմամբ յանձնակատար կամ գէթ վաճա-  
ռական ըլլալու է, որով պաշտօնեայ մը, երբ այս տեսակ  
գործողութիւն մ'ընէ, չի կրնար օգտուիլ այդ առանձնա-  
շնորհումէն: Բ. — Այդ ապրանքը յանձնակատարին զըտ-  
նուած տեղէն տարբեր տեղէ մը պէտք է եկած ըլլայ, որով  
եթէ Պոլսոյ մէջ գտնուող վաճառական մը դարձեալ Պոլսոյ  
մէջ գտնուող յանձնակատարի մը ապրանք տուած ըլլայ ծա-  
խելու համար, յանձնակատարը չի կրնար օգտուիլ վերոյիշ-  
եալ առանձնաշնորհումէն: Ապրանքին տարբեր տեղէ եկած  
ըլլալու պայմանը կարգ մը խարդախութիւններու տեղի  
չտալու նպատակաւ է: Միեւնոյն տեղւոյ մէջ իրարու ապ-  
րանք յանձնելը դիւրին է, որով շատ վաճառականներ, երբ  
տեսնեն թէ պիտի սնանկանան, իրենց ապրանքին մէկ մասը,  
պարտապահանջներուն ձեռքէն փախցնելու նպատակաւ, բա-  
րեկամ յանձնակատարներու կը յանձնեն եւ անոնք ալ, իր-  
րեւ առանձնաշնորհեալ (իմքիյազը) պարտապահանջ ներ-  
կայանալով, իրենց երեւակայական առնելիքն ամբողջու-  
թեամբ կը գանձեն եւ բուն պահանջատէրերը կը մնասուին:  
Սակայն գաղղիական օրէնքը այս կէտն ալ բարեփոխած է  
եւ այսօր, Ֆրանսայի մէջ, ապրանքին միեւնոյն կամ տար-  
բեր տեղէ զրկուած ըլլալը կարեւորութիւն չունի: Գ. —  
Պէտք է որ ապրանքը ծախելու համար (consigné) զըր-  
կուած ըլլայ: Ուրեմն, երբ պահելու կամ ուրիշ նպատակաւ  
զրկուած եւ յանձնակատարն ալ մթերանոցի վարձք տուած  
կամ ասոր պէս կարգ մը ծախքեր ըրած ըլլայ եւ նոյն իսկ  
այդ ապրանքը տեսակ մը ապահովութիւն նկատելով, տի-



ընչը ստակ տուած ըլլայ, այդ առանձնաշնորհումէն կարելի չէ օգտուիլ: Գաղղիական նոր օրէնքը այս կէտն ալ բարեփոխած է եւ այսօր, ապրանքն ի՛նչ նպատակաւ ալ զրկուած ըլլայ, յանձնակատարին իրաւունքն առանձնաշնորհեալ կը համարուի: Դ. — Դրկուած ապրանքը ո՛ր եւ է կերպով յանձնակատարին տրամադրութեան տակ պէտք է ըլլայ, այսինքն կա՛մ ապրանքը յանձնակատարին վաճառատունն հասած ըլլալու է, կամ մաքսատան մէջ կամ ուրիշ տեղ մը պահուած ըլլալու է իր անուան: Երբ ապրանքը տակաւին ճամբան է, պէտք է որ այդ ապրանաց բեռնագիրը (connaissance) կամ փոխադրագիրը (lettre de voiture) իր անուան գրուած ըլլայ եւ իր ձեռքը գտնուի: Հակառակ պարագային չի կրնար օգտուիլ այս առանձնաշնորհումէն: Եւ արդարեւ այդ ապրանքին իրեն զրկուած ըլլալն ուրիշ կերպով կարելի չէ ապացուցանել: Այս առանձնաշնորհումը, ինչպէս ըսինք, միայն ծախելու պաշտօն ունեցող յանձնակատարներուն յատուկ է: Գնելու պաշտօն ունեցող յանձնակատարները այս տեսակ բացառիկ առանձնաշնորհում մը չեն վայելեր, (1) այլ միայն, ըստ Մէճէլլէի 1491 յօդուածին, Հալֆր հապս ունին այսինքն մինչեւ որ ապապրանք տուողը (commettant) իր անուամբ գնուած ապրանքին փոխարէնը վճարէ, յանձնակատարը կրնայ այդ ապրանքը վար դնել, սակայն պէտք է գիտնալ թէ այս պարագային մէջ երբ ապրանքը վնասուի կամ ոչնչանայ, վնասը յանձնակատարը կը քաշէ ո՛չ թէ ապապրանք տուողը ( Մէճէլլէ Յօդ. 1492 ): Սա ալ աւելցընենք թէ այսպէս վար դնելու իրաւունքը (droit de retention) միայն յանձնակատարներուն եւ փոխանորդներուն յատուկ բացառիկ իրաւունք մը չէ: Ամէն ոք իր ձեռքը գրտնուած բանէ մը առաջ եկած առնելիքը մինչեւ որ դանձէ, կրնայ վար դնել զայն, ճիշտ ինչպէս ծախողն իր ապրանքը կամ դերձակն իր շինած զգեստը չի յանձներ, մինչեւ որ դրամը չառնէ:

[1] Գաղղիոյ օրէնագէտներն այս առանձնաշնորհումը « Գնող յանձնակատար ներուն ալ տալ կ'ուզեն, նկատելով որ օրէնագրին նպատակը յանձնակատարները պաշտպանել եւ վաճառակաճանձիւնը քաշելերէլ ըլլալով այս կարգի առանձնաշնորհումէ մը պէտք է առ հասարակ բոլոր յանձնակատարներն ալ օգտուին, մասնաւոր որ այս վերջիններուն ըրած ավանսը շատ անգամ ծախող յանձնակատարներու ըրած ավանսէն աւելի է: Դատարաններն ալ այս գաղափարն ընդունելու հակաձեռն են, բայց մեզ համար կարեւորութիւն չունի բնականաբար :

V. GANAY & C<sup>ie</sup>  
24 RUE DU SENTIER  
PARIS

Boulogne-Sur-Mer, le 10 Juin 1901

Monsieur R. Bouchard

Agence de Boulogne-Sur-Mer

19, Rue du Griffon, LYON

Transit International

Opérations en douane

Transports à forfait

Entre

La Grande - Bretagne

Et le Continent

Recouvrements


Transports de valeurs

A prix réduits

Directions et Agences

Dans toutes les principales villes

De France et de l'Etranger



NOTA. — Toute la correspondance pour le Transit international doit être adressée à Boulogne-Sur-Mer

Nous avons l'honneur de vous informer que nous avons remis ce jour au chemin de fer, en Petite Vitesse, à votre adresse R V B, 107, un C/soieries en retour, 107 K. acquit à Con-N. 57, d'envoi de M. Marshall, Londres.

Nos frais relatifs à cette expédition s'élèvent à fr. 30, 70, à encaisser par notre direction de Lyon.

Recevez, Monsieur, nos salutations empressées.

V. Ganay & Cie.

Détail des frais

Transp. de Londres à Boulogne	6,75
Droit de Statistique 10.p.colis	0,10
Taxe fixe par exped. pour ports de lettres, timbres divers des con., lettres de voiture etc.	2,50
Permis, plombs, acquit etc.	2,50
Fourniture de toile	1,75
Port de Boulogne à Lyon	16,50
Permis et quittance de douane	0,60
<b>Total Frs.</b>	<b>30,70</b>



Y. GANAY & Co

24 RUE DU SENTIER

PARIS

Boulogne-Sur-Mer, 10th June 1901

Boulogne-Sur-Mer

Branch-Office

Mr. R. Bouchard

19 Rue du Griffon, Lyon

International Transit

Custom - House clearance

Shipments by Contract

Between  
Great-Britania and  
The Continent

Recoveries

Bills transmitted

At moderate terms

Branch - Offices

In all the chief cities in France  
And abroad

N.B. — The correspondence  
relative international transit to  
be sent to Boulogne-Sur-Mer

We beg to inform you that we have just sent you per goods train R. V. B. 107, package silk goods on return 107 K. custom-house bond N. 57 from Mr. Marshall of London.

Our charges for the forwarding of same amounting to fr. 30. 70 to be collected by our agent in Lyons.

Yours truly

Y. Ganay & Co.

Detail of the charges

Carriage from London to Boulogne wharf klos. at per	6,75
Statistics duty 10 c-per package	0,10
Standard tax for postage, stamps	
for bills of lading, waybills	2,50
Repairs and different materials	4,25
Car. from Boulogne to Lyons	16,50
Custom-House permit and clearance	0,60
	<hr/>
	30,70

ՀԱՇԻՒՆԵՐՈՒ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ

1	Յուսիս	
Դրած	գրամագլուխս	100,000
	Նոյն	
Դրամարկդ,	գրասեղան, աթոռ եւն.	3,000
	2	
Քրէտի	Լիօնէին յանձնեցի 6 1/2 տոկոսով	20,000
	Նոյն	
Ռուսձէր	և Բնկ.է գնեցի	
	20 ծրար մետաքսեղէն 1148 մէդր 15 զրշ.էն	
	Զեղչ 18 1/10. — Արժէք 90 օր	
	4	
Ռուսձէր	և Բնկ. հաշուեցոյցը վճարեցի	
	Զեղչ 2 1/10. — Զէք Քրէտի Լիօնէի վրայ	
	5	
Գնեցի	կրօս և Հասէ, Բինիօ խան	
	2 հակ մետաքս. զուտ 199 1/4 քիլօ, 45 ֆրանքէն	
	Արժէք 90/100 օր	
	Նոյն	
Զանազան	ծախք մետաքսեղէններուն համար, 70 զրշ.	
	6	
Գնեցի	Շնայտրէ. Մեծ Նօր խան	
	25 ծրար սնդուս, 1468 մէդր, 18 զրշ.էն	
	Զեղչ 16 1/10. — Արժէք 90 օր	
	7	
Շնայտրրի	աուինք մեր թուղթը իր հ/ Յուլիս 1ին	
	10	
Ծախեցի	Գալէնտէրեանի	
	10 ծրար սնդուս 586 մէդր 20 զրշ.էն	
	Զեղչ 15 1/10. — Արժէք 90 օր	
	12	
Գալէնտէրեան	վճարեց կանխիկ, 2 1/10 զեղչով	



Երես Մ. հշ. ի	Յուսիս Օր	Գործողություն	Վանտա առանց	Ծախ եւ ՋԼԵ
1	2	4 Յուսիս Սնուակ Դրամագլխին	100000	
5	9	1 Կարապի Սնուակին գնուած կարասի	3000	3000
22	9	2 Գրեաթի Լիօնէ Սնուակին ցանձնուած դրամ		20000
16	24	2 Ընդհ. Սպր. Ռուսն. Ընկեաց գնուած ապրանք	13075	
9	22	4 Սնուակ Գրեաթի Լիօնէ ի Մեր չէրը Ռուսն. Ընկ. Սնուակին	12813 50	
25	9	4 Ռուսն. Ընկ. Սնուակին Մեր չէրը Գրեաթի Լիօնէ ի վրայ		12813 50
25	31	4 Ռուսն. Ընկ. Ծախ եւ ՋԼԵ 2 0/0 Ջեղչ		261 5
16	24	5 Ընդհ. Սպր. Կրօն եւ Հասի գնուած ապրանք	38983 50	
16	14	5 Ընդ. Սպր Ընդ. Ծախի Ծախք մետաքսեղէն. հմր.	70	70
16	24	6 Ընդ. Սպրանք Ծնայարքի գնուած ապրանք	22196 25	
25	20	7 Ծնայարք Վեար. Թղթ. Մեր թուղթը իր հ/		22196 25
31	16	10 Գալկեա. Ընդհ. Սպր. ի Մեր վանառու մը		9224
9	31	12 Սնուակ Գալկեաթեանի իր վճարումը	9039 50	
7	31	12 Ծախ եւ ՋԼԵ Գալկեաթ. ի 2 0/0 Ջեղչ		184 50

բունքները բացատրելէ ետք, քննենք ալքոլի ճարտարա-  
ուեստին գործնական պայմանները:

Ա. — Ծախարանի նիւթեր. — 1. Պսուղ, (խաղող, խըն-  
ձոր, կեռաս, սալոր եւն.) — Հասուն պտուղներու ջուրը  
կամ քամուքը կլիւֆօզ ե. խմոր կը պարունակէ բնականաբար:  
Ուրեմն հարկ չկայ շաքարացում եւ խմորում առաջ բերել ար-  
հեստական կերպով: Կը բաւէ այդ ջուրն առնել եւ հաստա-  
տուն բարեխառնութիւն ունեցող տեղ մը դնել: Այս բնական  
խմորումէն առաջ եկած հեղուկը կը կոչուի գինի, խնձորովի,  
տանձողի եւն.:

2. Յօղուն, (շաքարեղէգ, քուրիմ (sorgho), եգիպ-  
տացորեն): — Այս ցողուններէն ճնշումով հանուած հիւթը  
շաքար եւ խմոր կը պարունակէ: Բայց յաճախ գործողու-  
թիւնն արհեստական կերպով կը փութացնեն նախորդ տարի  
խմորեալ հիւթի մէջ թաթխուած քուրջի կտորուանք դնելով  
մէջը, որոց վրայ կը կազմուի ապա փրփուրը:

3. Արմաս, (ճակնդեղ, ստեպլին). — Ասոնց ալ հիւթը  
շաքարահամ է, բայց չի կրնար վայրկենապէս խմորուի:  
Պէտք է գարնջուրի փրփուր աւելցնել (150 հարիւրալիտր  
հիւթի համար 8 քիւօ): Ծառեր ծծմբական թթու ալ կը  
գործածեն: Պատրաստութեան եղանակները գլխաւորապէս  
երկու տեսակ են, \* Ա) ճակնդեղը կը քերթեն (րեկե),  
հիւթը կը ճոկեն եւ կը խմորեն: Բ) ճակնդեղին շերտերը  
թրջոց կը դնեն եւ ապա հիւթը կը խմորեն: Առաջին եղա-  
նակն ի կիր կ'առնուի մեծ գործանոցներու մէջ ուր օրական  
40,000 քիւօ եւ աւելի ճակնդեղ կ'սպառուի: Երկրորդն ի գործ  
կը դրուի երկրորդական զտարաններու մէջ:

4. Մելասակ (Շաքարի թիրեղացումէն ետք մնացած  
ջուրուր). — Մեծ մասամբ կազմուած է զիւրաւ խմորելի շա-  
քարային նիւթերէ: Մելասակէն բոլոր ալ կ'ենէ:

Բ. — Նախաճիւղի նիւթեր. — 1. Արմսի, (ցորեն, հա-  
ճար, գարի, վարսակ, եգիպտացորեն, բրինձ). — Ամէն տե-  
սակ արմտիքէ ալքոլ կ'ենէ: Արդիւնքն համեմատական է  
անոնց պարունակած նշայի քանակութեան հետ:



100	քիւօ	Բրինձէն	կեղնէ	36	լիւր	ալքօլ
»	»	Յորենէն	»	32	»	»
»	»	Հաճարէն	»	28	»	»
»	»	Գարիէն	»	25	»	»
»	»	Նգիպտացորենէ	»	25	»	»
»	»	Վարսակէն	»	22	»	»

Միայն զարին ու հաճարը մալլ (գարեջուրի համար պատրաստուած նիւթ) կը պարունակեն որ նշայն շաքարի կը փոխէ վայրկեանապէս: Արմաիքի միւս տեսակներուն վրայ պէտք է մալլ աւելցնել: Խմորելի հեղուկը քաղցու կը կոչուի: Խմորումի աստիճանը փոփոքի միջոցաւ կ'որոշեն: 2. Գիի (արչըն աղածը) հասապսուդ. — Եւրոպայի հիւսիսային երկիրներուն մէջ ալքօլ կը հանուի գիէն զոր Անգլիացիք ճինողի (gin) կ'անուանեն: Պատրաստութեան մէջ աշխատելու է որ նախնական նիւթին պարունակած իսկական իւղերն ալքօլին մէջ չմտնեն: Ճինողի պատրաստողք խմորումը կը դադարեցնեն եւ կը գտեն՝ ամբողջ շաքարն ալքօլի չփոխուած: 3. Գեսնախնձոր. — Գետնախնձորներու պարունակած 16-22% բուսալիւրը կլիւֆօզի փոխելու համար կը լուան, շոգիով կ'եփեն եւ խմոր կը շինեն: Յետոյ մալլ եւ ջուր կ'աւելցնեն վրան, Նիւթ ալքօլ հանել ուզուի, պէտք է խմորել եւ թորել:

Գ. — Խորանիւթային ցիւքեր. — Խորչանիւթը՝ փայտին մէջ իր անզուտ վիճակով կը բաղադրէ թուղթին, թանթրուենիի (միւրվիք) ծուծին եւ հին քուրջերուն նիւթը: Աստնք կլիւֆօզի փոխելու համար կը գործածեն ծծմբական թթու, յետոյ կը լուան, թթուն (acide) կը յագեցնեն կաւիճով (հարպօնադ քր հայսիօմ), կը գտեն, կ'եռացնեն, եւ 10 ժամ ետքը նորէն կը յագեցնեն կիրի բնածխատով եւ ապա կը գործարարեն: Կը մնայ լոկ շաքար: Այս եղանակը շատ երկար կը քշէ եւ սուղի կը նստի: Մինչեւ 19րդ դարու կէսը, ալքօլը կը հանուէր գիւնիին զտումով եւ իբր դեղ կը գործածուէր: Ալքօլի սպառումն աւելնալուն եւ այգեգործական տաքնապին եւ ճարտարարուեստի կատարելագործութեան հետեւանքով բուսական ուրիշ նիւթերէ ալ

սկսան ալքօլ հանել, աւելի առատ եւ աւելի աման: Այսօր, ալքօլներու մեծ մասը կը հանուի ճակնդեղի, մելասսակի, գետնախնձորի եւն. հիւթերէն:

Արտադրութիւն. — Ռուսիա եւ Գերմանիա այսօր մեծաքանակ ալքօլ կ'արտադրեն, գլխաւորապէս արտածութեան համար: Հետեւեալ ցուցակին մէջ կ'երեւի Եւրոպական զանազան Տէրութիւններուն արտադրած ալքօլին քանակութիւնները. —

	Հարիւրալիտր	Հարիւրալիտր	
Ռուսիա	3,431,000	Իտալիա	193,000
Գերմանիա	2,815,000	Դանիա	187,000
Ֆրանսա	1,864,000	Ֆինլանտա	52,000
Աւստրիա	1,440,000	Չեխոսլովակիա	50,000
Անգլիա	1,074,000	Նորվեգիա	40,000
Պելժիա	265,000	Շուէտ	40,000

Հոլանտա 194,000

Վաճառակաճութիւն եւ սպառում. — Ալքօլը կը գործածուի անուշահոտութեան, քիմիական նիւթերու եւ դեղագործութեան համար, բայց մեծ մասը կ'սպառուի իբր բնական: Ընկերներու պատրաստութեան ծառայող ալքօլները ընդհանրապէս կրկին կը թորուին: Ահա ցուցակ մը, որուն մէջ կ'երեւի մէն մի Տէրութեան սպառած ալքօլի քանակութիւնը:

Ռուսիա	Հարիւրալիտր	3,255,000
Գերմանիա	»	2,972,000
Մ. Նահանգք	»	2,150,000
Ֆրանսա	»	1,445,000
Աւստրիա	»	1,320,000
Թուրքիա	»	1,163,000
Անգլիա	»	906,000
Իտալիա	»	427,000

Ալքօլ արտադրող երկիրներու մեծ մասը արտադրութեան վրայ տուրք կ'առնէ, մինչ ֆրանսայի եւ ուրիշ մի քանի երկիրներու մէջ տուրքն սպառումին վրայ կ'առնուի: Ալքօլի արտադրութիւնն ու վաճառումը գրէթէ ամէն երկիրներու մէջ ազատ են, բայց ի Շուէտ-Նորվեգիայէ, Ռու-



սրայէ եւ Չուիցերիայէ, ուր խիստ միջոցներ ձեռք առնուած են: Ռուսիոյ մէջ, 1898 յունվար 1էն ի վեր, կառավարութիւնն ինք մենաշնորհ ըրած է ալքօլը: Չուիցերիոյ մէջ ալ այսպէս է 1887էն ի վեր, ճարտարարուեստական ալքօլներու համար միայն: Ալքօլէն առնուած տուրքը շատ մեծ քանակութեան կը հասնի: Ամէնէն աւելի տուրք կ'առնէ Անգլիա, Հոլանտականին եւ Ամերիկեանին կրկինը, իսկ Ֆրանսայի եւ ռուսացոյցը: Ինչու, Անգլիա, Ամերիկա եւ Ֆրանսա միասին 2 միլիառ ֆրանքի մօտ տուրք կ'առնեն ալքօլէն:

**ԱՄՆԻՒ.** — Ածելիները ծանօթ էին Եգիպտացիներուն եւ Յոյներուն, որք իրենց մօրուքը եւ երբեմն մազերը կ'ածիլէին: Վերջին ատեններս հնարուեցան մեքենական ածելիները, որով արհեստէն չեղող անձերն իսկ պիտի կրնային դիւրութեամբ ածիլուիլ: Այս պատճառաւ մեծ քանակութեամբ ծախուեցան անոնցմէ, բայց ի վերջոյ ինչ ինչ անպատեհութիւններ նշմարուելով այսօր գրէթէ մէկը թողուած են: Շէֆիլտի ածելիները երկար ատեն մեծ համբառնեցան, բայց այսօր ֆրանսական, շուետական եւ գերմանական ածելիներն ալ կը հաւասարին անգլիականին: Շատ ընտիր ածելիներ կը շինուին ֆրանսական Շառլէլուօ քաղաքին մէջ և ուրիշ քանի մը տեղեր:

**ԱՄՈՒՅ.** — Սովորաբար այս ընդհանուր անուամբ կը յորջորջուին բնածուխով հարուստ այն բոլոր նիւթերը, որք տաքութեան ազդեցութեան տակ ձեւափոխութիւն մը կրած են վտարելով մէկ մասը ջրածնախառն նիւթերուն որք բուսական եւ կենդանական ամէն արտադրութիւններու մէջ կը գտնուին բնածխաւոր նիւթերու հետ: Ածուխներն երեք տեսակ են. 1. — Կեքրանտիկան ածուխ, որ յառաջ կուգայ ոսկորներու եւ երբեմն կենդանական ուրիշ նիւթերու կըրացումէն, գոց ամանի մէջ: 2. — Բուսական կամփայտի ածուխ, որ կ'ստացուի փայտի կամ փայտային ուրիշ նիւթերու կրացումէն գոց ամանի մէջ: 3. — Հանգալի ածուխը (հանքածուխ, ածխաքար եւն.) երկրային կեղեւին ինչ ինչ մասերուն մէջ կը գտնուի խաւ խաւ, եւ տաքութեան ու

ճնշումի ազդեցութեան տակ աւելի կամ նուազ կատարեալ ձեւափոխութիւն կը կրէ: (Տեսնել Հանգալի բառը): Ճարտարարուեստը կ'արտադրէ նաեւ զանազան տեսակ արհեստական ածուխներ որք մասնաւոր գործածութիւններու կը ծառայեն, ինչպէս ելեկտրական լուսաւորութեան համար եւն.: Ածուխին էական յատկութիւնն է օդին մէջ այրիլ, այսինքն օդին թթուածինին հետ խառնուիլ: Ածուխը կը գործածուի ջեռուցման եւ այն բոլոր գործողութիւններու համար ուր տաքութիւնը կարեւոր դեր մը կը խաղայ: Ոսկորներու կրացումէն առաջ եկած ածուխը՝ իր ներքին հիւսուածքին պատճառաւ՝ ծծելու զօրութիւն մ'ունի: Անոր այս յատկութիւնը կը գործածեն հեղուկներու մէջ գտնուած ինչ ինչ գունատու նիւթերու համար: Օչարակներու գունատումը ձեռք կը բերուի փոշիացած կենդանական ածուխին մէջէն գտելով: Փոշիացած ածուխը եւ մասնաւորապէս փայտի փոշիացած ածուխը կազերը ծծելու յատկութիւն մ'ունի եւ այս պատճառաւ իրր հականեխիչ կը գործածուի: Ածուխի զտոցները օգտակարապէս կը գործածուին անմաքուր եւ նոյն իսկ նեխած ջուրերը խմուելիք վիճակի մէջ դնելու համար: Փոշիացած ածուխը ժամանակաւ բժշկութեան մէջ կը գործածուէր վէրքերը հականեխելու համար: Բայց այսօր քիմիական նոր եւ աւելի ազդու հականեխիչներ անցած են ածուխին տեղ: Միայն, ստամոքսի ինչ ինչ հիւանդութեանց մէջ, փոշիացած ածուխ կը գործածուի իբր ծծող կազերու: Լուսաւորութեան ածուխը արհեստական ածուխ է որ կը շինուի ֆօֆով, շաքարի ածուխով կամ նաւթի, քարիւղի ածուխով զորս բարակ փոշի կը վերածեն եւ յետոյ, պատշաճ ձեւ մը տալու համար, խայծղանով կը կուտակեն: Փայտի ածուխը, որուն գործածութիւնն ատենօք այնքան ընդհանուր էր մետաղագործութեան մէջ, հետզհետէ երեսի վրայ թողուեցաւ: Ի՞ր գործածութիւնն այսօր սահմանափակ է, կազին եւ քարիւղին մրցման ենթարկուած ըլլալով: 20 տարուան մէջ ածուխին սպառումն 39 0/10 պակասած է: Փայտի ածուխին վաճառման միութիւնն է ընդհանրապէս հարիւրալիտը: Մէկ սղեր (վառելավայտի չափ մը) փայտէն 3-3 1/2 հարիւրալիտը ածուխ կ'եղնէ:



**ԱԿՆ ԿՍՄ ԷԿՆՆ.** — Գաւառակ Խարբերդի: Բնակիչ 10,000: Տուն 1941: Գիւղախումբերն են Սալահյի, 16 գիւղ 721 տուն, Ըլըճ 15 գիւղ 740 տուն, Ապուչեխ 10 գիւղ 1130 տուն, Էկին 9 գիւղ 859 տուն, Սարաճըք 20 գիւղ 1193 տուն, Էնէսիք 18 գիւղ 668 տուն, Անջրգի 9 գիւղ 600 տուն: Էկին շինուած է Եփրատի վրայ, Տարսուսեան լեռներու ապառաժուտ եզերաց վրայ, այգիներով ու պարտէզներով շրջապատուած: Ապուչեխ, Կամարակապ, Արէքի եւն. այսօր քաղաքին արուարձանները կը նկատուին: Տունէրը քարէ են: Քաղաքին տեսքը ամփիթատորնի ձեւ ունի: Էկին անունը ծագում առած է առատ ջուրի աղբիւրէ մը, Քասը կեօլի, որ քաղաքին կեդրոնը գտնուած մեծ ապառաժէ մը կ'ելնէ եւ Եփրատ կը թափի: Կան քանի մը ջաղացքներ և խաղախորդարաններ: Բնակիչք չեն գիտեր օգտուիլ այսքան մեծ շարժիչ ոյժէ մը: Քաղաքը բաժնուած է երկու գլխաւոր թաղերու: անկանոն փողոցներով: Վաճառականութիւն եւ երկրագործութիւն գրէթէ չկայ: Ներածմունք Հալէպէ եւ Կ. Պոլսէ: *Ճարտարուեստ.* — Մանուսա (բամբակէ հիւսուածոյ), եազմա, խաղախորդութիւն, մուշտակագործութիւն: Բեք. — Խոզակ, ճէհրի եւ թութ:

**ԱԿՈՍՅ.** — Ակուաները կարծր մարմիններ են որք մարդուն եւ կենդանիներու մեծ մասին ծնօտը կը դարգարեն եւ սնունդը կտրելու կամ մանրելու կը ծառայեն: Մարդուն ակուաները 32 հատ են. — 8 հատ հերձատամ, 4 շնատամ եւ 8 պղտիկ ու 12 մեծ լեսատամ: Երկու ծնօտներու ակուաները միանալով կը կատարեն ծամողութեան պաշտօնը, որ անհրաժեշտ է մարտողութիւնը դիւրացնելու համար: Եթէ, սա կամ նա պատճառով, ակուաները մասամբ կամ ամբողջովին թափին, ծամողութիւնը կը դժուարանայ, մարտողութիւնը կը գէշնայ եւ առողջութիւնը կը խանգարուի: Քայց ճարտարարուեստը բարեբախտաբար օգնութեան հասաւ ընտելեան, որուն պակասը լեցուց արհեստական ակուաներու շինութեամբ: Այսօր, յատուկ արհեստաւորներ մեծ քանակութեամբ եւ կատարելութեամբ կը շինեն արհեստական

ակուաներ, որք բնական ակուաներուն տեղ դրուելով ծամողութեան գործը կը վերահաստատեն: Իբր արհեստական ակուայ կրնան գործածուիլ ո՛չ միայն շինուած ակուաները, այլ նաեւ կենդանիներու եւ նոյն իսկ մարդու ակուաները:

**Ա.** — Մարդկային ակուաները, որք ատենօք շատ կը գործածուէին, երբ շինուած ակուաներն այսօրուանին պէս բնականին հետ կատարեալ նմանութիւն չունէին եւ մանաւանդ շատ դիւրին կը հայթայթուէին, այսօր գրէթէ բնաւ չեն գործածուիր, որովհետեւ հազուագիւտ են: Քանի մը ատամնաբոյժեր միայն կը գործածեն շատ սուղ գինով: Անոնց հազուագիւտ ըլլալուն պատճառը սա՛ է որ հիւանդանոցներու մէջ այսօր մեծ հսկողութիւն եւ խստութիւն ցոյց կը տրուի, որպէս զի դիակներու ակուաները չհանուին, չգողցուին: Հիւանդանոցի պաշտօնեաները, որք երկար ատեն ատամնաբոյժերու հայթայթիչներն եղան, այսօր չեն կրնար իրենց արհեստն ի գործ դնել: Եթէ մարդկային ակուաներ ունենալ ուզուի, պէտք է Խտալիայէ բերել տալ:

**Բ.** — Ծծմբաւորուած քաուչուի հնարուածն առաջ, փիղի ժանիքներէ կամ գետածիի ակուաներէ կը շինուէին արհեստական լինտերը, որք մեծ անպատեհութիւն մ'ունէին, այսինքն շուտով կը դեղնէին ու կը թուլնային: Պէտք էր նորոգել միշտ: Քաուչուի գործածումէն ետք բոլորովին դադրեցաւ գետածիի ակուաներու առուտուրը, որ շատ կարեւոր էր:

**Գ.** — Ճենապակիէ ակուաներն այսօր կատարելութեան այնպիսի աստիճանի մը հասած են որ գրէթէ ամբողջովին յաջորդած են միւս բոլոր արհեստական ակուաներուն, որոնցմէ դերադանց են ամէն կերպով: Բնական ակուաներուն ձեւին ու երանգներուն ճշտիւ կը նմանին: Նաեւ հաստատ ու դիմացկուն են: Այս ակուաներն ընդհանրապէս լանսկիէ (բլաքի) երկու պղտիկ ծայրեր ունին, որոց միջոցաւ կըրնան ոսկիին վրայ մածուցուիլ կամ քաուչուի մէջ հաստատուիլ: Ճենապակիի ակուաներուն մեծ մասն Ամերիկայէն կուգայ: Անգլիա ալ մեծ քանակութեամբ կը շինէ: Երբորդ




կարգը կուզայ Ֆրանսա, որ սակայն ատենօք առաջին տեղը կը գրաւէր այս կարեւոր ճարտարարուեստին մէջ: Մինչեւ այսօր ծանօթ են Վիլմիւռ ըսուած ֆրանսական ահաւները, որք այսօրուան ամերիկեան ահաւներուն զրէթէ բոլոր յատկութիւններն ու առաւելութիւններն ունէին: Տեսակի կողմէ, անգլիական ահաւները աւելի կարծր, աւելի դիմացկուն են, բայց ձեւի կողմէ նուազ կատարեալ, նուազ նրբերանգ ու նուազ բնական են քան ամերիկեանները, բայց երկուքն ալ հաւասարապէս կրնան գործածուիլ ոսկիի կամ քառւորի վրայ: Դժուար է գիտնալ թէ ամբողջ աշխարհի մէջ տարին որչափ ահաւ կը շինուի, բայց վերի վերոյ 40 միլիոն կ'ենթադրուի: Ֆրանսական կառավարութիւնը դուրսէն եկած ձեռնապակիէ ահաւներուն 100 քիւօյէն 150 ֆրանք մաքսատուրք կ'առնէ:

**Ա. Հ. Մ. Բ. Տ. Ա. Պ. Ա. Շ.** — Քաղաք Անգլիական Հնդկաստանի, Պոմպայի հիւսիսային կողմը, Բնակիչ 150,000: Ճարտարարուեստական հաստատութիւնք խիստ շատ են եւ ստուարութիւ գործաւորներ կը բանեցնեն: Ահմէտապատի դիպակները կամ տեղական բառով, ֆիքապները, որք ոսկի եւ արծաթ թելերով կը շինուին, նշանաւոր են ամբողջ Հնդկաստանի մէջ: Մետաքսի եւ բամբակի շոգեշարժ մանարաններէն դատ, տուններուն մէջ ալ գործասեղաններ կան: Ահմէտապատ անուանի է նաեւ իր քանդակազարդ փայտերով, խեցանօթներով, կօշիկի գործարաններով եւ բուսական թելերէ պատրաստուած թուղթերով: Բժոժական մետաքսները Պէնկալէն, Չինաստանէն եւ Կեդրոնական Ասիայէ կը ներածուին:

Քաղաքին մէջէն կ'անցնի այն երկաթուղին, որ Պոմպայէն Ռաճբուդանա կ'երթայ: Առեւտրական դատերու մէջ վճիռ կուտան քաղաքային դատարանները: Պարտապահանջ մը իր պարտականին դէմ դատ բանալու համար պարտաւոր է նախապէս երաշխաւորութեան գումար մը յանձնել դատական ծախուց համար: Վաճառանիչերու կանոնադրին համաձայն, ամէն օտար ապրանքներ պէտք է իրենց վրայ պիտակ մը կրեն որ երկրին մէջ պատրաստուած ըլլալը ցոյց տուող:

Գնող	Վաճառող	Դրամատրք	Չանագան
			100000
		20000	
		13075	
			12813 50
		12813 50	
		261 50	
		38983 50	
		22196 25	
		22196 25	
9224			
		9039 50	
		181 50	





ՊՍԿԵՐ Բ.

Շահեկան տեղեկութիւններ՝ մասնագէտ արուեստագէտի մը կողմէ,  
յաջորդ անտրի մէջ:

## ՀԱԾՈՒԱԿԱՆ

Առուտուրի մէջ խիստ կարեւոր է գիտնալը թէ քոյս ինչ ապրանքը ճշտապէս քանի՜ զրուշ արժած է: Այս մասին դիւրութիւն մ'ըլլալու համար հաշուակալը սովորութիւնը րած են շիլինը կամ ֆրանքը սաշափ զրուշէն հաշուել: Իրա՛ւ, այս կերպով կ'ազատին հաշուական երկար և դժուարին գործողութիւններէ, բայց շատ անգամ ճիշտ գինը գտնուած չի կրնար ըլլալ: Միեւնոյն տեսակի պատկանող բայց տարբեր խմորներէ շինուած և տարբեր գիներով գնուած երկու ապրանքներէն իւրաքանչիւրին համար եղած ծախքերը տարբեր համեմատութեամբ կը ներկայանան: Օրինակի համար, եարտան 50 փարայի արժած պասմային 8 փարան ծախք է, մինչդեռ 90 փարանոցին 10 փարան միայն ծախք է: Բացայայտ է որ եթէ շիլինը միօրինակ գնով հաշուելու ըլլանք, մին աւելի և միւսը պակաս արժեցնելով մենք զմեզ կը խաբենք և կը տուժենք: Ապրանքն իր իսկական արժէքէն 2 փարա պակաս արժեցնելով, այդ 2 փարան մեր սովորական շահէն վրայ կուտանք, իսկ եթէ ընդհակառակն 3 փարա աւելի գին դնենք, ուրիշ մը ճիշտ գինը գտած ըլլալով, մեր ծախածէն 3 փարա պակաս պիտի կարենայ ծախել և մեր ապրանքը պիտի սպասէ ի զուր: Այս անտեղութեանց տեղի շտալու համար պէտք է շիլինի, ֆրանքի ևն. 8 <sup>0</sup>/<sub>10</sub> էն մինչև առ առաւելն 15 <sup>0</sup>/<sub>10</sub> ծախքերով միասին արժէքները գիտնալ: Ահառասիկ այս նպատակաւ պատրաստուած և հետեւեալ ցուցակին մէջ նշանակուած են շիլինի, մարքի, ֆրանքի ևն. գիները ծախուց յաւելմամբ և շատ շատ <sup>1</sup>/<sub>2</sub> <sup>0</sup>/<sub>10</sub> տարբերութեամբ:



Լ. Օսմ. 100 զրշ. էն

Ընդհնր.	Շիվին	Ֆրանք	Մարք	Քուրոն	Ռուպլ
Ծախք	£ 110 զրշ	4,40	18 $\frac{12}{100}$ 11,0	21 $\frac{80}{100}$ 11,0	8 $\frac{70}{100}$ 11,0
8 %	5,9400	4,752	5,832	4,968	12,4200
8 1/2 %	5,9645	4,774	5,859	4,991	12,4775
9 %	5,9950	4,793	5,886	5,014	12,5350
9 1/2 %	6,0225	4,818	5,913	5,037	12,5925
10 %	6,0500	4,840	5,940	5,060	12,6500
10 1/2 %	6,0775	4,862	5,967	5,083	12,7075
11 %	6,1050	4,884	5,994	5,106	12,7650
11 1/2 %	6,1325	4,906	6,021	5,129	12,8225
12 %	6,1600	4,928	6,048	5,152	12,8800
12 1/2 %	6,1875	4,950	6,075	5,175	12,9375
13 %	6,2150	4,972	6,102	5,198	12,9950
13 1/2 %	6,2425	4,994	6,129	5,221	13,0525
14 %	6,2700	5,016	6,156	5,244	13,1100
14 1/2 %	6,2975	5,038	6,183	5,267	13,1675
15 %	6,3250	5,060	6,210	5,290	13,2250

Այս կերպով ապրանայ խսկական արժեքը վերջին ծայր դիրքում թեամբ կը գտնուի : Տեսէք ինչպէս. — Ապրանքը գործարանէն մինչեւ վաճառատուն հասցնելու համար եղած ծախքերը գումարելով պէտք է գտնել թէ ապրանքին բուն արժեքին վրայ քանի՞ առ հարիւր ծախք եղած է, օրինակի համար ենթադրենք թէ 13 % : Ուրեմն, եթէ անգլիական ապրանք է, շիվինը կ'արժէ 6,215 զրշ. ոսկեդրամ, եթէ ֆրանսական է (կամ իտալական, որուն դրամին արժեքը ֆրանսականին հաւասար է) ֆրանքը կ'արժէ 4,972 զրշ. ևն : Այսպէս, ապրանքին ոսկեդրամ արժեքը գտնելէ ետք, վաճառատան սովորական ոսկիին վերածել, — Օրինակ մը.

Մանչէստրէ Պոլիս բերուած է 1 սնտուկ

100 ծրար մատամբոլ I	գին	8.	£.	42. 10
100 » » II	»	7.	».	36. 05
			£.	78. 15
	3 % զեղշ		».	2. 07. 03
			£.	76. 07. 09
Սնտուկ, բեռնակր, նաւաւարձ, եւլն.			».	4. 06. 03
			£.	80. 14

Արդ £ 80. 14 էն, որ հաշուեցոյցին ընդհ. գումարն է, կը հանենք £ 78. 15ը, որ ապրանքին բուն արժեքն է և կ'ունենանք £ 1. 19 որ զուտ ծախք է և անգլիական ոսկին 110 զրշ. ի հաշուով կ'արժէ 214 1/2 զրշ : Մաքսի և ուրիշ ծախուց գումարն ալ վրան աւելցնելով կ'ունենանք 997 զրշ : Հիմա գտնենք ապրանքին արժեքը. £. 78. 15, Լ. Օսմ. 110 զրշ. էն կ'արժէ Լ. Օսմ. 86  $\frac{62.5}{100}$ , որու համար եղած 997 զրշ. ծախքը 11 1/2 % ի կը համեմատի : Արդ շիվինը՝ 11 1/2 % ծախքով՝ կ'արժէ ոսկեդրամ 6,1325 զրշ :  $6,1325 \times 7 \frac{3}{12} (7,25) = 44,46$  ոսկեդրամ որ Լ. Օսմ. 112էն (օրինակի համար) կ'արժէ 49 զրշ. 32 փր.  $6,1312 \times 8 \frac{6}{12} (8,50) = 52,12$  ոսկեդրամ որ Լ. Օսմ. 112էն (օրինակի համար) կ'արժէ 58 զրշ. 15 փր.

Ըստ այսմ

Գին  $49 \frac{32}{40} = 49.80 \times 100$  ծրար = 4980  
 »  $58 \frac{15}{40} = 58,37 \frac{1}{2} \times 100$  » = 5837 1/2

Ուրեմն, այդ 1 սնտուկը, Լ. Օ. 112էն արժած է 10817 1/2 զրշ. փորձ. — £. 80, 14 = Լ. Օ. 100էն 8877

Ծախք 782 1/2

9659 1/2 զրշ

Լ. Օսմ. 112 ի վերածելով կ'ունենանք 10818 1/2 զրշ. այսինքն 1 զրշ. ի տարրերու թիւն մը որ նշանակու թիւն չունի :

Բացառաբար կը պատահի որ պատրաստ գտնուած ապրանքի մը զեղշը ծախուց գումարէն աւելի կ'ըլլայ : Այս պարագային մէջ այդ յաւելեալ մասը մաքսատունէն ասորին եղած ծախուց գումարէն հանելով հաշուելու է, Վ.



### ԻՆՉ Է ԴՐԱՄԱԳԼՈՒԻՒԸ

3. Հին դարերու մարդը նախնական նիւթի մեծ պաշար մը գործածելու պէտք ունէր գործիք մը շինելու համար. — ո՞րքան ալ անկատար ըլլար այդ գործիք: Եւ յետոյ շինութիւնն օրեր կը քշէր: Ճամբորդներ կը պատմեն թէ ո՞րքան ժամանակ պէտք էր Բոլոնէզիոյ կղզեցիներուն ծառափոր նաւակ մը շինելու եւ զայն մինչեւ ծով փոխադրելու համար: Գործիները քանի՜ կատարելագործուն մարդը նոյնքան աւելի օգտակար արդիւնք մը կ'արտադրէ ու կ'աւելցնէ իր հաստատուն դրամագլուխը, շարժուն դրամագլուխներու սպառումը նուազեցնելով: Կրնայ ըսուիլ թէ Եւրոպայի դրամագլուխներու սպառումը խոստումը կ'ստուգէր կրնայ ըսուիլ թէ Եւրոպայի դրամագլուխներու սպառումը խոստումը կ'ստուգէր: Ամէն գիւտի նպատակն է նախնական նիւթի սպառումը նուազեցնել գործիքի միջոցաւ: Նիւթօճիկի շոգեշարժ մեքենան ժամը 13 քիլօ հանքածուխ կ'սպառէր: Այսօր այնպիսի մեքենաներ հնարուած են որք 750 եւ մինչեւ իսկ 700 կրամ հանքածուխ կը վատնեն: Բոլոր գիւտերուն նպատակն է նիւթը, քանիք նուազեցնել: Գործիքը ո՞րքան զօրաւոր ըլլայ նոյնքան նուազ կ'սպառէ շարժուն դրամագլուխը: Մէկ խօսքով, ճարտարական յառաջդիմութեան նկարագիրը սապէս կրնանք սահմանել. — ճարտարական յառաջդիմութիւնը կը կայանայ Եւրոպայի Եւրոպայի դրամագլուխներու սպառումն եւ հաստատուն դրամագլուխներու արդիւնաւորութեան միջեւ առաւելագոյն խոստումնակ համեմատութիւն ստանալուն մէջ: Բոլոր շարժուն դրամագլուխները շարունակ միտում ունին հաստատուն դրամագլուխի վերածուելու: Նախնական նիւթերը կը գործածուին արտադրութիւններու որք դրամի կը վերածուին: Լա՛ւ, արհեստաւորն ի՞նչ պիտի ընէ այդ դրամը. — իր արհեստը պիտի զարգացնէ, այսինքն իր գործիքները պիտի աւելցնէ եւ հետեւապէս շարժուն դրամագլուխները, այսինքն նախնական նիւթերն ու վաճառքները պիտի վերածուին հաստատուն դրամագլուխներու, որք են այդ արհեստաւորին գործիքները, կամ թէ արհեստաւորն իր շահը պիտի պահեցնէ կալուածի կամ բաժնեթուղթեր, պարտաթուղթեր պիտի գնէ: Արդ, բաժնեթուղթերը հաստատուն դրամագլուխներու մէկ մասը կը ներկայացնեն: Երկաթուղէի ընկերութեան մը բաժնեթուղթերը, օրինակի համար, կը ներկայացնեն այդ ընկերութեան բոլոր գործիքները, շինութիւնները, կայարանները, մթերանոցները եւն: Բաժնեթուղթերը կոտորակեալ մասեր են, որք հաստատուն դրամագլուխ-

ներու սեփականութեան մէկ բաժինը կը ներկայացնեն: Իսկ պարտաթուղթերը զրաւ մ'են եւ զրաւն հաստատուն դրամագլուխներու տիրակցութիւն մ'է (co-proprieté):

4. — Արժէքը միշտ յարաբերական է: Կ'եղնէ կամ կ'իջնէ համեմատաբար: Հաստատուն դրամագլուխներու արժէքն ուղիղ կը համեմատի շարժուն դրամագլուխներու առատութեան հետ: Գործիքն ո՞րքան աւելի կարենայ շարժուն դրամագլուխներ արտադրել, նոյնքան աւելի կը կոտորի անոնց դինը: Բայց եթէ այս շարժուն դրամագլուխներուն միութեան արժէքը կը նուազի, ընդհակառակն ամբողջական արժէքը կը բարձրանայ, Կրնանք ըսել ուրեմն թէ «Տնտեսական յառաջդիմութիւնը կը կայանայ Եւրոպայի դրամագլուխներու միութեան արժէքին նուազման եւ ամբողջական արժէքին (valeur globale) յաւելման մէջ» կամ թէ «Ազգի մը հարստութիւնն ուղիղ կը համեմատի իր հաստատուն դրամագլուխներուն արժէքին եւ իր Եւրոպայի դրամագլուխներուն ամբողջական արժէքին հետ եւ խոստումնակ՝ Եւրոպայի դրամագլուխներու միութեան արժէքին հետ»: Եւրոպայի դրամագլուխներու առատութիւնը չէ որ կը վնասէ հաստատուն դրամագլուխներու արժէքին, այլ համարժէք շարժուն դրամագլուխներու պակասութիւնն է որ կրնայ առաջ բերել այս երեւոյթը որ գեղարտագրութիւն կը կոչուի: Եւրոպայի դրամագլուխներու մէկ կէտի վրայ յորդումն անոնց խիստ առատութիւնն առաջ չի գար, այլ համարժէքներու նուազութիւնն: Կրնանք ըսել թէ Եւրոպայի դրամագլուխի մը արժէքը կը բարձրանայ ոչ-համեմատուն դրամագլուխներու առատութեան համեմատ: Աշխատութեան բաժանման խնդիրն է այս: Ամփոփելով ըսենք. — Եւրոպայի դրամագլուխի մը արժէքը կը բարձրանայ համեմատուն դրամագլուխներու քիչութեան եւ ոչ-համեմատուն դրամագլուխներու առատութեան համեմատութեամբ:

5. — Մարդը հաստատուն դրամագլուխ մ'է, որ կարող է օգուտներ արտադրել, ճիշտ ինչպէս դաշտ մը, մեքենայ մը, կամ ո եւ է գործիք մը: Սակայն այս գործիք ուրիշ առաւելութիւն մ'ունի: Կրնայ ինքզինքը կատարելագործել եւ հետեւապէս իր արժէքը բարձրացնել: Երբ գործաւոր մը մէկ խորանարդ մէթը հող կրէ իր ձեռնասայլով, մեքենագէտը քանի մը հարիւր թօնօ կը կրէ իր վայրաշարժով: Ակնհեւ է թէ այս վերջինը՝ աւելի մեծ ծառայութիւն մատուցանելով՝ պիտի կրնայ շատ աւելի դրամ շահիլ քան գործաւորը՝ իր ձեռնասայլով: Հետեւապէս, մարդուն արժէքը կը բարձրանայ գործիքին հզօրութեան հետ: Ուրեմն, գործիքներու կատարելութիւնն ամենանշտօր միջոց մ'է մարդուն արժէքը



բարձրացնելու : Մարդուն արժէքը , աշխատութեան տեսա-  
կէտով , աւուրչէքէն կը չափուի : 1760ին , երբ Արքրայդ հը-  
նարեց մանելու մեքենան , Անգլիոյ մէջ 7900 մանող գործա-  
ւորներ կային : 1856ին , մանող եւ հիւսող գործաւորներու  
թիւն Անգլիոյ մէջ բարձրացաւ 379,000ի : Այսօր 600,000ը  
կ'անցնի : Եւ սակայն , Արքրայդի ժամանակակից գործաւոր-  
ները ջախջախել կ'ուզէին անոր հնարած մեքենան , կարծելով  
թէ « անիկա իրենց հացը ձեռքերնուն պիտի խլէր » : Նշանա-  
ւոր անտեսադէտ Մ . Ժ . Սէյ շատ ազուր բացատրած է թէ  
արտադրութեան յաւելումն ի'նչպէս կը բարձրացնէ մարդուն  
արժէքը : — « Ենթադրենք թէ , կ'ըսէ , 300,000 ֆրանք կը  
գործածուի տարազագործարանի մը մէջ ,  $\frac{1}{5}$ ը նախնական  
նիւթերու եւ  $\frac{2}{5}$ ը բանողչէթի : Տարազագործը մեքենայ մը  
կը գտնէ , որով բանողչէթին կէսը կը խնայէ , Բայց միթէ  
այդ 100,000 ֆրանքն անրեզուն վիճակի՞ մէջ պիտի ձգէ :  
Ո՛չ : Իր արտադրութեանց գինը պիտի իջեցնէ աստիճանա-  
բար : Հետեւապէս պիտի աւելցնէ սպառումն եւ գործարանը  
պիտի ընդարձակէ : Եթէ այս գումարն իր գործին չպահե-  
ցունէ , անշուշտ պանքա մը պիտի դնէ կամ ֆոմանսիդ ընկե-  
րութիւն մը կազմելով պիտի շահագործէ զայն , այսինքն պի-  
տի մտնէ նոր ձեռնարկութիւններու մէջ , որք մարդկային աշ-  
խատութեան յաւելում մը պիտի պահանջեն » : Ըսել է թէ  
մարդուն արժեքը ուղիղ կը համեմատի շարժուն դրամագլուխ-  
ներու ամուրքեան եւ առատութեան հետ :

6. — Բանողչէքը կախում չունի դրամագլխէն : Եթէ այդ-  
պէս ըլլար , դրամագլուխը չուտով կ'սպառէր : Բանողչէքը կը  
վճարէ սպառողը , Արտադրիչը կանխավճար միայն կ'ընէ :  
Դրամագլուխը երաշխաւորութիւն մ'է թէ բանողչէքը ժա-  
մանակին պիտի վճարուի , ի'նչ որ ալ ըլլայ արտադրութեան  
չաճը ու վնասը :

7. — Սխալ է ըսել թէ դրամագլուխը շահ կը բերէ :  
Չեանարկութիւնն է , գործն է շահ բերողը : Գործի մը մէջ  
դրամագլուխ դնելով չէ միայն որ շահ կ'արտադրուի : Ընդ-  
հակառակն շահը կրնայ շատ աւելի մեծ ըլլալ որքան բազմա-  
տաբար քիչ է դրամագլուխը : Գործի մը շահ բերողը յաճա-  
խորդն է որ չի վարձատրեր ո՛չ դրամագլուխը ո՛չ աշխատու-  
թիւնը , այլ արտադրութեան մը , ծառայութեան մը փոխարէնը  
միայն կը վճարէ : Եանը կազմող սարքերն են ուրեմն այս ար-  
տադրութեան կամ ծառայութեան խնդրանքը , ածուցութիւնը  
եւ զանոնք յաճախորդներուն արամագլուխեան տակ դնելու  
ճարպիկութիւնը : Դրամագլուխը ձեռնարկութեան ստտարնե-  
րէն մէկն է միայն :



Գ Ի Ն

12 ՏԵՏՐԻ՝ ՂՐՈՒՇ 12 ԿԱՆՆԻԿ

Գաւառաց հաւաք՝ իբր բոսնի ծախք՝ 3 ՂՐՈՂ աւելի  
Հասցէ

ՍԻՄՕՆ ՉԷՕՄԼԻՔՁԵԱՆ

Ի Խմբագրատուն «Բիւզանդիոն» Հայաբերքի  
Պատր Ալի ճասսէսի թիւ 23—25 Կ. Պոլիս

ԱՆՀՐԱԺԵՇՏ

Ամէն վանառականի, գրագրի, ուսանողի եւայլն.

معارف نظارت جلیله سنک ۳۰۳ نومرولی و فی ۱۶ تشرین اول  
سنه ۳۱۶ تاریخلو رخصتنامه سیله طبع اولمشدر



«Ազգային գրադարան»



NL0083828



